ՆՐԱ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ

(Ն. Սարուխանյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ պատմաբան և հրապարակախոս Նորայր Բագրատի Սարուխանյանի ծննդյան 80-ամյակը: Պատմական գիտությունների դոկտոր Նորայր Սարուխանյանը ծնվել է 1935 թ. մայիսի 1-ին Խորհրդային Հայաստանի Գորիսի շրջանի Տեղ գյուղում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1953 թ. ընդունվել և 1958 թ. ավարտել է Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը: 1958-1962 թթ. աշխատել է հանրապետության կոմերիտական մարմիններում, այնուհետև՝ որպես ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր հեռուստառադիոպետկոմի ռադիո-հաղորդումների պրոպագանդայի խմբագրության ավագ խմբագիր: 1963 թ. Սարուխանյանն ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան (գիտական ղեկավարն էր Աշոտ Հովհաննիսյանը): Այն ավարտելուց հետո, մինչև 1970 թ. աշխատել է նույն ինստիտուտում, սկզբում՝ որպես կրտսեր, այնուհետև՝ ավագ գիտաշխատող: Այդ տարիներին նա հրատարակում է պատմության վերաբերյալ բազմաթիվ գիտական հոդվածներ: Հատկապես գիտական հասարակության ուշադրությանն է արժանանում «Պատմագրության մեջ Ներսես Աշտարակեցու գործունեության գնահատման հարցի շուրջ» հոդվածը, որը խորհրդահայ պատմագրության մեջ XIX դ. առաջին երեսնամյակի հայ ազատագրական շարժման նշանավոր գործչի վերաբերյալ առաջին գիտական հրապարակումն էր: 1968 թ. Սարուխանյանը պաշտպանում է «Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, որը, որպես մենագրություն, Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ, լույս է տեսնում 1971 թ.: 1970-1986 թթ. Ն. Սարուխանյանն աշխատում է որպես «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրի առաջին տեղակալ: Նա մեծ ջանքեր է գործադրել հանրապետության առաջատար թերթի գաղափարական և ազգային ուղվածությունն ապահովելու, թեմատիկան արդիականացնելու ասպարեզում: ՀԽՍՀ

Գերագույն խորհրդի նախագահության 1985 թ. մայիսի 13-ի հրամանագրով «Ժուռնալիստիկայի բնագավառում կատարած բազմամյա ակտիվ աշխատանքի համար և ծննդյան 50-ամյակի կապակցությամբ» Ն. Սարուխանյանը պարգևատրվում է Գերագույն խորհրդի պատվոգրով: Այսօր էլ իրենց արդիականությունը չեն կորցրել «Խորհրդային Հայաստան» թերթում տասնամյակներ առաջ տպագրված՝ «Սիոնիզմի և պանթուրքիզմի դաշինքը», «Պատմության դասերն ընդդեմ նենգափոխության», «Ցեղասպանության կեղծարարները պատմության դատաստանի առաջ», «Հեղափոխական Ռուսաստանը և հայ հասարակական միտքը» և բազում այլ հոդվածներ:

1980-1991 թթ. Ն. Սարուխանյանը վարել է «Հայ գիրք» հանրապետական վարչության գլխավոր տնօրենի պաշտոնը: Ավելի քան երկու տասնամյակ աշխատելով մամուլում և «Հայ գիրք» վարչությունում՝ Սարուխանյանը չի թողել գիտական ասպարեզը: Այդ տարիներին նա գիտական հոդվածներ է տպագրել հանրապետության առաջատար պարբերականներում: 1980-ական թվականներին լույս տեսան նրա՝ «Ստ. Շահումյանի պատմագիտական հայացքները» և «Սիոնիզմի իսկական դեմքը» գրքույկները: Ստեփան Շահումյանի մասին իր ուսումնասիրության մեջ հեղինակը ցույց տվեց, որ հայ ժողովրդի պատմական անցյալի այլևայլ երևույթների, համաշխարհային տարբեր անցքերի, անդրկովկասյան և ռուսական իրականության զանազան իրադարձությունների՝ Շահումյանի խորաթափանց և պատմականության դիրքերից տրված դիպուկ գնահատականներն անանց մտավոր արժեքներ են:

«Սիոնիզմի իսկական դեմքը» գրքույկը խորհրդային ժամանակաշրջանում առաջին հայերեն հրատարակությունն էր, որտեղ ցույց էր տրվում, որ սիոնիստներն իրենց շարժման քաղաքական նպատակների համար եռանդուն ջանքեր էին գործադրում Հայկական հարցը մանրադրամ դարձնելու թուրք-սիոնիստական հարաբերությունների շուկայում: Եվ դա նրանց հաջողվեց հատկապես երիտթուրքերի հետ շփումների, Հայոց ցեղասպանության իրագործման նախօրյակին և ընթացքում:

Ն. Սարուխանյանը 1991-1993 թթ. աշխատել է որպես ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի գիտական քարտուղար, իսկ դրանից հետո մինչև օրս աշխատում է Պատմության ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող: 1997 թ. պատմության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ լույս է տեսնում Ն. Սարուխանյանի «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ» աշխատությունը, որը հաջորդ տարում պաշտպանվում է որպես դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին հրատա-րակվեց Ն. Սարուխանյանի «Լեոն և Հայկական հարցը» գրքույկը, 2008 թ.

լույս տեսավ «Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը» մենագրությունը:

Սարուխանյան պատմաբանի նախասիրություններում ընդհանրապես առաջնային բնագծում են պատմագրությունն ու պատմահրապարակախոսությունը: Այս տեսակետից ուզում ենք ընդգծել, որ մինչխորհրդային հայ պատմագրության մեջ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միաց-ման և Հայկական հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրություն-ներում Սարուխանյանն անդրադարձել է նշանավոր բոլոր հեղինակու-թյուններին՝ պատմաբաններ, գրողներ, հասարակական-քաղաքական հայտնի դեմքեր, երևելի եկեղեցական գործիչներ, և վերլուծելով նրանց հայեցակետը՝ ստեղծել է ուշագրավ, կուսակցական գաղափարականացումից վեր կանգնած, ժողովրդի համազգային խնդիրներից բխող և պատմագիտության առաջընթացի պահանջներին ընդառաջող ձևակերպումներ, որոնք ժխտում են դոգմատիզմն ու պատեհապաշտությունը: Հասարակական-քաղաքական խորթ երևույթների ու բարքերի դեմ անզիջում ու մարտնչող է Ն. Սարուխանյանի հրապարակախոսությունը: ԽՍՀՄ կազմալուծումից հետո քաջնազարական սլացքով Հայաստանի Երրորդ հանրապետությանը տիրացած Հայոց համազգային շարժման ղեկավարության վարած կործանարար քաղաքականության վերաբերյալ 1992 թ. սկզբից հանրապետական ընդդիմադիր մամուլում Ն. Սարուխանյանի տպագրած հրապարակախոսական հոդվածները հետամուտ էին քաղաքական և բարոյական վայրընթացների կանխմանը նպաստելուն: Այդպիսիք էին նրա՝ «Հայաստանը «թուրքական հրաշքի» ցոլքի տակ», «Ավետիք Իսահակյանը հրամայում է», «Խ. Աբովյանի խանդավառ երգը և մշտամնա վերքը», «Քաղաքական արկածախնդիրը ազգային գաղափարախոսի դերում», «Ազգակործան աննախընթաց արտագաղթը», «Մտքի պատմաբանը և պայքարի պատմությունը», «Թուրքիայի կովկասյան հանձնարարականները երեկ և այսօր» և այլ հրապարակումներ:

Լինելով XX դ. վերջին երեսնամյակի և ընթացիկ դարասկզբի հասարակական-քաղաքական իրադարձությունների զգայուն ժամանակակիցը, խորհրդային և հետխորհրդային հայկական իրականության տեղաշարժերի անշեղ մեկնաբան, սովոր ուրախանալու դրական նույնիսկ աննշան տեղաշարժերից՝ Սարուխանյանին ցավ են պատճառել հատկապես վերջին տարիներին պատմական անցյալի, ազգային արժեքների նենգափոխման ընդգծված միտումները, այն տխուր իրողությունը, որ բուրժուական վայրենի լիբերալիզմի պահանջների ճնշման ներքո կեղծվում են պատմական երևույթներն ու իրադարձությունները, քամահարանքով անցնում անցյալի ուսանելի դասերի կողքով: Ընդդեմ կեղծարարության՝ սկզբունքային, գիտական պատմականության դիրքերից գրած իր հոդվածներում («Սոցիալիզմի

դասերը», «Համաշխարհային պատմության ամենապայծառ դրվագը», «Դաշնակցությունը հայ գրականության մեծերի պատմաքննական հայացքի ներքո», «Ս. Շահումյանի պատմահասարակագիտական ժառանգության արդիական խորհուրդը», «Անկախության հիմնահարցը և գլոբալիզացիան», «Ս. Պետերբուրգի դերը հայերի կյանքում», «Բարեկամության և եղբայրության մասին 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի իսկական դեմքը», «Ռուսաստանը և Հայկական հարցը», «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գործիչների գնահատմամբ») և բազում այլ հրապարակումներում հեղինակը բարձր է պահում պատմա-հրապարակախոսության պատիվը:

2013 թ. հրատարակվեց Ն. Սարուխանյանի «Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին» խորագրով մենագրությունը, որը նշանակալի ներդրում է հայագիտության մեջ: Գրքում լայնությամբ և խորությամբ ցույց է տրվում, որ անկախ քաղաքական հայացքներից, իրենց ստեղծագործություններում ազգային շահին ծառայելուն էին հետամուտ հայ պատմագրության նոր ժամանակաշրջանի բոլոր հեղինակները՝ Մ. Էմինն ու Ղ. Ալիշանը, Ա. Գարագաշյանն ու Ք. Պատկանյանը, Մ. Օրմանյանն ու Լ.Էոն, Ալ. Երիցյանն ու Գր. Խալաթյանցը, Ն. Ադոնցը, Ալ. Ջիվելեգովը: Այս մասին գրքի հեղինակը հանգամանորեն պատմում է «Հայ նոր պատմագիտության երախտավորները» ակնարկաշարում:

Ուշագրավ է «Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը» վերջերս լույս տեսած գիրքը, որտեղ համատեղված են XX դ. մեծ գիտնականի կյանքն ու գործը: Մեծ պատմաբանի վաստակն ու մտքի խորությունն այս մենագրության մեջ բացահայտվում և արժեվորվում են ինքնատիպ ու փայլուն վերլուծությամբ, հույժ ուսանելի ընդհանրացումներով: Գիտական պաղարյուն դատողություններն այստեղ զուգակցվում են ուսուցչի նկատմամբ խորին ակնածանքով, որ անկրկնելի հմայք է տալիս գրքին:

Հոբելյանին նվիրված մեր խոսքի ավարտին ցանկանում ենք կարևորել բարոյական այն բարձր նկարագիրը, որ նրան ուղեկցել է ողջ կյանքի ընթացքում: Լավն ու գեղեցիկը կրող և դրանք սատարող Նորայր Սարուխանյանին ցանկանում ենք առողջություն և նրանից ակնկալում մեր պատմագիտական գրականությունը հարստացնող նորանոր արժեքներ, որին մշտապես պատրաստ է նրա ստեղծագործ միտքը:

ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա. Ց.
Պատմական գիտությունների թեկնածու